

ԿԵԱՆՔ ԵՒ ՄՇԱԿՈՅԹ

ԷԶՄԻԱՆՆԻ ՇՈՒՐՁ

Այն՝ ինչ որ կատարուում է այսօր Հայաստանում՝ շատ կողմերով յիշեցնում է Պոլսի Ապրիլեան եղեռնը 1915-ին, կամ արարական արշաւանքի առաջին շրջանի դէպքերը։ — Հայ ազգային ղեկավարութեան բնաջնջում՝ մի օտար ուժի կողմից։

Մասկայի հրամանով բանտարկւած, աւտուրւած կամ մոյն իսկ գնդակահարւած են բազմաթիւ հայ գրողներ, արւեստագէտներ, գիտնականներ, տնտեսական, պետական ու կուսակցական վարիչ դէմքեր։ Սպանւած կամ բանտերում մեռած են համարուում Նդիշէ Զարեմ, Ակսել Բակունց, Գուրգէն Մահարի, Վաղարշակ Նորենց, Ալազան, Լեւկամար, Դ. Տէր — Սիւմոնեան, Վանանդեցի, Նդիա Զուբար, Ար. Ներզիսեան, Ս. Տէր — Գաբրիէլեան, Պ. Մակիմզեան, Դ. Շահվերդեան, Մ. Նեգիրարեան եւ շատ ուրիշներ։

Բանտարկւածների կամ աւտուրւածների հաշիւն ու համարը չկայ — Հր. Անտոնեան, Մանուկ Աբեղեան, Ս. Կասեան, Զարէլ Նսայեան, Աշոտ Յովհաննիսեան, Նրւ. Թուլայեան, Մ. Զանան, Վ. Թոքովենց, Ազ. Վշտունի, Պրոֆ. Ղամբարեան, Յ. Զօրեան, Գր. Զուբար, Ա. Ներսիսեան, Ս. Նսայեան եւ բազմաթիւ ուրիշներ։ Ի՞նչ է մեռնի վիճակը։ Ո՞րք են։ Ո՞վ ողջ է, ո՞վ մեռած — ոչինչ յայտնի չէ։ Հայ մշակոյթը, հայ պետականութիւնը, տնտեսական եւ համընդհանր կեանքը ահաւոր հարածի է ենթարկւած...

Եւ բնորոշ է, որ արտասահմանում, եթէ մի կողմ դնենք դաշնակցական մա-

մուլը, մարդիկ ընդհանուր առմամբ, շատ քիչ են մտահոգւում Հայաստանի գլխին եկած այս աննախընթաց աղէտով։ Ընդհակառակը, կարծես, ֆողբիկուկամ դահիճների արարքները արդարացնելու նիգեր էլ են նկատուում. իբր քէ, պետական շահն է պահանջում մաքրագործել իշխանութեան հակառակորդ տարրերին, իբր քէ Անտոնեաներն ու Բակունցները Հայաստանի յշտամիներ լինէին։ Նոյն իսկ այն փաստը, որ բոլորովին անանցանելի պատմէ է քաշւած Հայաստանի ու արտասահմանի Հայութեան միջեւ եւ որ անգամ ՀՕԿ-ի ու Բարեգործականի պէս խղճով «օղանցներն» էլ են փակւած, ցատու ու կատաղութիւն չի յառաջացնում մեռնի, ուրիշ պէտք է որ ամենից շատ վրդովւելին իրենց հասցւած ծանր յուսախաբութեան համար։

Արտասահմանի հայութեան մի մասի բռնած ամօքալի դիրքը առանձնապէս ցայտուն կերպով երեւան եկաւ խորհրդային իշխանութեան էջմիածնի եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան գլխին բերած աղէտների գնահատութեան խնդրում։ Ապրիլ 6-ի գիշերը «մեռնում» է խորէն Ա. Կաթողիկոսը։ Միայն Ապրիլ 10-ին հեռագրւում է Նուստադէմի Պատրիարքին, քէ Կաթողիկոսը վախճանել է «սրտի կարւածից»։ Այնուհետեւ գրեթէ երեք ամիս՝ պաշտօնական ո՛չ մի լուր էջմիածնից. ո՛չ մահւան մանրամասնութիւնները, ո՛չ տեղեկութիւններ յուղարկաւորութեան մասին, ո՛չ մոյն իսկ հաղորդագրութիւն արտասահմանի քերթերին, քէ ով եւ ինչ կարգադրութիւններ է արել Ամեն-

նայն Հայոց կաթուղիկոսութեան մասին:

Իսկ այդ միջոցին զանազան աղբյուրներից ստացում են տեղեկություններ, թե կաթուղիկոսը ոչ թե բնական մահով է մեռել, այլ սպանել է չեկիստների ձեռքով, թե՛ էջմիածինը կողոպտում է, վանքում մնացած զարդերն ու եկեղեցական անօթները գրաւում են կառավարութեան կողմից յետնեալ տարբի փոխարէն, թե՛ էջմիածնի միաբանների մի մասը բանտարկւած է, իսկ մէկ - երկուսը նոյն իսկ սպանւած տրւում են եւ սպանւածների անունները՝ Մեսրոպ ու Բագրատ Արքեպ. - երը եւ Դանիէլ վարդ: Զաղոյեանը: Առհասարակ, ասիւոր պատմութիւններ էին արւում էջմիածնի շուրջ եւ կաթուղի - կոս խորէնի սպանութեան մասին, բայց էջմիածինը լուռ մնաց, մինչեւ որ արտասահմանի եւ, յատկապէս, երուսաղէմի Պատրիարքի ֆաշած հեռագիրների ստիպման տակ ստացւեց երկու թուղթ. մէկը՝ խորէն Ա. կաթուղիկոսի 1936 թ. 18 ապր. կոնդակը Գեորգ Արք. Զորեֆ-չեանին տեղակալ նշանակելու մասին, միւսը՝ այս վերջինի 1938 թ. Մայիս 24 գրութիւնը, որով հաղորդւում է, թե՛ «խորէն կաթուղիկոսը տարւոյս ապրիլի յոյս 6-ի գիշերը հանգեաւ ի Տէր սրտի կաթւածից», թե՛ կառավարութեան հրամանով կատարւած բժշկական բնուրիւնից ու անդամահատութիւնից յետոյ «վախճանապէս հաստատուեցաւ, թե՛ խորէն Ա. կաթուղիկոսի մահը հետեւանք է եղել սրտի կաթւածի», թե՛ կաթուղիկոսի մահւան լուրը «անմիջապէս հեռագրուեցաւ» արտասահման եւ «համալուրեմական համրապետութիւններ - բում գտնւած բոլոր քեմերին»: Երկու բղբերի տակ էլ Գեորգ Արք. Զորեֆ-չեանի անուն կողքին կարդում ենք՝ «Ստոր. Արսէն Արքեպիսկոպոս» — իսկապէս մի ստոր արարած, որ բազմաթիւ վատ արարքներով հասել է մինչեւ

արքեպիսկոպոսութիւն ու Գերագոյն խորհրդի անդամութիւն:

Այս երկու գրութիւնները տեղի են տալիս մի շարք կասկածների եւ առարկութիւնների: Նախ՝ եթէ Գեորգ Արք. 1936 թ. ապրիլին է տեղակալ նշանակւած, ինչու՞ այդ փաստը մինչեւ այսօր գաղտնի է պահւել: Արդեօք տեղակալութեան այդ կոնդակը «ստոր» Արսէն արքեպիսկոպոսների ձեռքի գշրքը չէ՞ շինւած յետին բւով ինչ որ մուր դիտարութիւններով: Եթէ դեռ 1936 թ. ապրիլին գոյութիւն ունէր նման կոնդակ, ինչու՞ պիտի ծածուկ պահւէր հաւատացեալներից կամ, եւս առաւել, Պատրիարքներից ու քեմական առաջնորդներից:

Յետոյ, եթէ խորէն կաթուղիկոսը մեռել է բնական մահով՝ «սրտի կաթւածից», կառավարութիւնը ի՞նչ պէտք ունէր երեսնից բժշկներ ուղարկելու, յատուկ ֆնուրիւն ու անդամահատութիւն կատարելու եւ արձանագրութիւն կազմելու համար. մի հակայեղափոխական կղերական մեռաւ - զնաց՝ էլ ի՞նչ կարիք կար անհանգստանալու: Եթէ ճիշդ է, որ երեսնից բժշկներ են ուղարկւած, ասել է թէ խորհրդային իշխանութիւնը պէտք է զգացել իրեն համար արդարացուցիչ փաստեր ունենալու, նշանակում է թէ այդ իշխանութիւնը անմասնակից չէ ապր. 6-ի գիշերը էջմիածնում տեղի ունեցած ողբերգութեան:

Նոր տեղակալը եւ «ստոր» Արսէն Արք. -ը յայտնում են նաեւ, թէ իրենք կաթուղիկոսի մահւան մասին հեռագրել են «համալուրեմական համրապետութիւններում գտնւած բոլոր քեմերին»: Ինչպէս յայտնի է, խորհրդային օրէնքով եկեղեցական քեմեր գոյութիւն չունին եւ մահչցւած էն միայն «հաւատացեալների համայնքներ», տեղակալը ինչպէ՞ս կարող էր հեռագրել տալ անգոյ քեմերին: Հէնց միայն այս փաստը բա-

ւական է, որպէսզի կասկածի տակ առնին էջմիածնից ստացւած քղքերքի հաստոհացումները:

Ինչքան էլ մարդ ուզենայ բարեացական լինել, անկարելի է բացարձակ հաստոյով ու վստահութեամբ վերաբերել դէպի Գեորգ եւ Արսէն Արք.-երի հաղորդածները: Ո՛չ, էջմիածնում ինչ որ ծանր բան է կատարւած, որ յանցաւոր խղճի տէր մարդիկ աշխատում են ծածկել հասարակութիւնից եւ նոյն իսկ սուտ ու շինծու լուրերով մոլորեցնել հանրային կարծիքը: Հակառակ դէպքում, պէտք չկար ամիսներով լուռ մնալու եւ յետոյ միայն դուրս գալու այսպիսի անհամոզեցուցիչ գրութիւններով:

Մերի եւ անհերքելի փաստը այն է, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան մեծածախ, որ էջմիածինը այսօր ամառացած՝ նկարակամ, վարչական ու բարոյական ամենաբարձր օրեր է ապրում, որ նա բոլորովին կտրւած է իր հօտից, մանաւանդ արտասահմանի հայութիւնից եւ դրանով իսկ դադարել է Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան դերը կատարելուց: Մենք այն կարծիքի չենք, թէ էջմիածինը ամէն ինչ է, — «Մէկ Հայաստան: Մէկ հայկական մշակոյթ: Մէկ էջմիածին» *) — այդպիսի ծայրայեղ մտքերը այսօր առնագին անհիմն ու ծիծաղելի են, թէկուզ հէնց այն պատճառով, որ հայութիւնը կրօնական տեսակէտից միայն էջմիածնի հետ կապւած չէ, բայց Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը, իբրեւ ազգային — բարոյական գործօն, դեռ կարեւոր ոյժ է յատկապէս արտասահմանի հայութեան համար եւ նրան հասցւած ամէն հարւած պէտք է ճկատել իբրեւ հայութեան ուղղւած հարւած եւ նրա մասին մտածելն ու մտահոգւիլը չպէտք է բողոքել միայն «սոսոր» Արսէններին:

Եւ հասկանալի է, որ էջմիածնի ու

Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան վիճակը սկսած է լրջօրէն զբաղեցնել հանրային մարմիններն ու գործիչներին: Արդէն հրապարակի վրա կան գործնական առաջադրութիւններ էլ — ձեռք բաշել էջմիածնից եւ արտասահմանում ստեղծել Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւն: Հարցի աւելի սխալ ու վտանգաւոր լուծում դժուար է երեւակայել:

Զպէտք է մտաւալ, որ առաջ էլ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան դերը արտասահմանի վերաբերմամբ մեծ մասամբ եղել է բարոյական. էջմիածինը դիտւել է գլխաւորապէս իբրեւ հոգեւոր կենտրոն, իսկ վարչական գործերը ամփոփւած են եղել արտասահմանի ազգային — եկեղեցական կազմակերպութիւնների ձեռքը: Պատճառ չկայ այդ դրութիւնը փոխելու եւ այսօր, ե՛ւս առաւել այսօր, երբ ազգային — բարոյական ազդակները ամէն կողմ չափից աւելի բուլկացել են: Թո՛ղ էջմիածինը մընայ իր բարոյական կենտրոնի դերում, նոյն իսկ Գեորգ ու Արսէն Արք.-երի ձեռքին, եթէ հնարաւոր չէ աւելի լուր մարդիկ դնել նրանց տեղը, իսկ արտասահմանի հայութիւնը թո՛ղ մտածէ իր ներքին — վարչական — մշակութային գործերի բարեփոխութեան ու կազմակերպութեան մասին:

Էջմիածնի գլխին հասած աղէտը ո՛չ թէ պէտք է ստիպէ մտածել Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը արտասահման փոխադրելու մասին, այլ պէտք է մի նոր առիթ դառնայ, որպէսզի արտասահմանի հայութիւնը լրջօրէն անդրադառնայ իր վիճակին եւ գտնելով համերաշխութեան ու համագործակցութեան համազգային մի գետին, վերջապէս, սկիզբը դնէ ազգային ընդհանուր կազմակերպութեան: Այդ կազմակերպութիւնը, բնականաբար, չի կարող ու չաւելի է ուղղւել Հայաստանի կամ էջմիածնի դէմ, այլ պէտք է լրացնէ նրանց բոլորած պակասը:

*) «Յուսարբեր», Թիւ 50 :

կամ մարդիկ, որոնց թիւը, բարեբախտաբար, օր օրի վրա պակասում է եւ ուրեքն աշտօր էլ դեռ պնդում են, թէ արտասահմանի հայութեան ազգային կազմակերպութիւնը վնասակար է Հայաստանի եւ Հայաստանի ներկայ իշխանութեան համար: Ինչո՞ւ է վնասակար — չի հասկացում: Ընդհակառակը, Հայաստանի իշխանութեան անտարբեր կամ բշտամական դիրքը դէպի ամէն բան, որ

կապ ունի արտասահմանի հետ, վնասակար է արտասահմանի հայութեան համար: Եւ ժամանակն է, որ վերջինս էլ հասկանայ, թէ ինքը խորհրդային արտերի պարարտացման ծառայող աղբ չէ, այլ մի կենդանի եւ իրաւահաւասար մասնիկը հայութեան, որ, որպէս այդպիսին, ունի իր ինքնուրոյն ազգային կեանքը կարգաւորող ու դիկավարող ազգային իշխանութիւնը:

ԶՈՒՀԱՃԵԱՆ ԵՒ ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԸ

Պոլսահայ երաժշտագէտ Զուհանեանի ծննդեան հարիւրամեակի առթիւ Փարիզի Միւրքիալիթէ մեծ սրահում բեմադրուեցաւ «Լէպլէպիւնի Հօր Հօր»-ը, բիւրքերէն լեզուով: Հայոց ժողովուրդը, տէրտէրով ու վարդապետով, փութացել էր լեցնել սրահը:

Այդ առթիւ կծու բանավեճ առաջ եկաւ մամուլի եւ հասարակութեան մէջ. Պէ՞տք էր բեմադրել «Լէպլէպիւնի»-ն. եթէ պէտք էր, ինչո՞ւ չբեմադրուեցաւ հայերէն լեզուով. եթէ բեմադրուեցաւ բիւրքերէն լեզուով, պէ՞տք է հայ հասարակութիւնը լեցնէր սրահը:

Տխրութիւն է իջնում մարդու վրա, ի տես նման երեւոյթի եւ ի յուր նման հարցերի: Դեռ երէկ էր բիւրքը ամենավայրագ կերպով կոտորեց մեզ ու աշտօր էլ շարունակում է արհամարհել, հալածել ու բնաջնջել: Եւ քրքական հալածանքի գոհերն են, կամ կոտորածների գաւակներն են այսօր շտապում բառորոն պանծացնելու համար բիւրք մշակոյթը: Ազգային արժանապատուութեան տարօրինակ ըմբռնում է այս: Յամենայն դէպս, ուրիշ ազգեր այդպէս չեն վարում...

Ասում են՝ Զուհանեանը հայ երաժշ-

տագէտ է եւ, համարեւ մարդ — ինչո՞ւ չպատել: Ինչո՞ւ պատել. եւ «Լէպլէպիւնի Հօր Հօր»-ը հայ մշակոյթի հետ ի՞նչ կապ ունի: Զուհանեանը գերազանցապէս բիւրք երաժշտագէտ է եւ բիւրք մշակոյթի սպասաւոր — ժամանակը գտանք բիւրք բեմի յորելեաններ կատարելու: Եւ ինչո՞ւ մենք պէտք է կատարենք այդ յորելեանը, երբ բիւրքերն իրենք մտած են անտարբեր: Ո՞վ է ստիպում մեզ բիւրքից էլ աւելի բիւրք լինել...

Անասնական ազգայնամոլութիւն չէ, որ պաշտպանում ենք մենք: Ամէն ազգ եւ ամէն ազգի մշակոյթ յարգելի է մեզ համար, բայց չպէտք է մոռանալ երբեք հրեկւայ միլիոնաւոր գոհերը, չը պէտք է մոռանալ եւ այսօրայ մօայլ վիճակը: Կը գայ ժամանակ, երբեք, որ Զուհանեանի յորելեանն էլ կարելի կը լինի տօնել հեշտ սրտով, բայց աշտօր ուրիշ յորելեաններ պէտք է տօնել: Եւ այն հոգեւոր ու աշխարհիկ առաջնորդներն ու գործիչները, որ լեցնել էին Միւրքիալիթէի սրահը ըմբռնելու համար «Լէպլէպիւնի Հօր Հօր»-ի երգերը, պարտաւոր էին այլ վարմունք գոյց տալ...

